# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 74

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖՈՐԴ ՏՐԱՆԶԻՏ ՄԱԿՆԻՇԻ 823LL70 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴԵՊԻ ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՎՃԱՐ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԹՈՒՂՈՒ ՕՐԵՐԸ ԵՎ ԺԱՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՐԴԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.07.2020թվականի թիվ 01/07.4/4175-2020 գրությունը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ֆորդ Տրանզիտ մակնիշի 823LL70 պետհամարանիշի ուղևորատար միկրոավտոբուսով Արենի համայնքի բնակավայրերից դեպի մարզկենտրոն և հակառակ ուղղություններով անվճար կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելուն՝ բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

2. Հաստատել միկրոավտոբուսով իրականացվելիք երթուղու ժամերը և օրերը համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

3. Սահմանել ուղևորատար միկրոավտոբուսի վարորդի աշխատավարձի չափը՝ 160 000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝

ա/ հավասարության սկզբունքը պահպանելու նպատակով Աղավնաձոր -Եղեգնաձոր երթուղին սպասարկող վարորդի հետ կնքել պայմանագիր, սահմանված գրաֆիկի համաձայն օրական մեկ անգամ Աղավնաձորից Եղեգնաձոր և հակառակ ուղղությամբ բնակչությանը սպասարկել անվճար՝ ամսական վճարելով համայնքի բյուջեից 50 000 ՀՀ դրամ առանց հարկերի:

բ/ ուղևորափոխադրումների կազմակերպման համար հատկացնել դիզելային վառելիք՝ ըստ սահմանված նորմերի:

5. Սույն որոշման 1-4 կետերը իրականացնել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում, որից հետո ներկայացնել վերանայման,